ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը կայացրել է որոշում տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին:

Մրցույթը կկայանա 2020 թվականի հուլիսի 13-ին ժամը 14^{00}-ին:

Կից ներկայացվում են՝ քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի N 6 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր 2 թերթ:

Խորհրդի նախագահ՝ **Կ. Հարությունյան**

19.05.2020թ.

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 21-02460-2020
19 05 2020 թ.

Քաղվածք

<<ԱՌԱՏԱՇԵՆԻ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. ՄԱՅԻՍ 19-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ.

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
   Մրցույթը նշանակել 2020թ. հուլիսի 13–ին ժամը 14^{00}-ին:
   Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝ **Կ. Հարությունյան**

29. 05. 2020թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1

ՀՀ Արմավիրի մարզի <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1.ՀՀ քաղաքացիությունը,
2.բարձրագույն կրթությունը,
3.ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր) :

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1.դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
2.ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5.հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6.աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. հունիսի 3-ից հուլիսի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 13–ին ժամը 14^{00}-ին <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, Մաշտոց 6

Տեղեկությունների համար զանգահարել 098 700-418 հեռախոսահամարով

<<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի

անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

կառավարման խորհուրդ